ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»՝ _____ Պ.Սանթրոսյան

Երևանի տարածաշրջանային N1

պետական քոլեջի տնօրեն

«18» ___10___ 2016 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Կ Ա Ր Գ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԹԻՎ 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Քոլեջի մանկավարժական խորհուրդը տնօրենի նախագահությամբ գործող մարմին է, որը լուծում է միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի և սովորողների հետ կապված հիմնահարցերը:

1.2 Մանկավարժական խորհրդի որոշումները պարտադիր են Քոլեջի բոլոր դասավանդողների և ուսանողների համար:

1.3 Մանկավարժական խորհրդի լիազորությունները անժամկետ են:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

2.1 Մանկավարժական խորհրդի կազմի մեջ մտնում են.

ա) ի պաշտոնե՝ քոլեջի տնօրենը, ուսունական գծով փոխտնօրենը,մանկավարժները, ամբիոնի վարիչները, լաբորանտները, գրադարանավարը, ուսումնական մասի քարտուղարները:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Մանկավարժական խորհուրդը՝

ա) Մանկավարժական խորհուրդի գործունեության կարգը հաստատում է տնօրենը

բ) տնօրենին է ներկայացնում առաջարկություններ Քոլեջի կառուցվածքային և/կամ ծրագրային փոփոխությունների վերաբերյալ,

գ) քննարկում է Քոլեջի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը,

դ)քննարկում է Քոլեջի գործունեության գլխավոր ու հեռանկարային ուղղությունները,

ե) շնորհում է մրցանակներ, անվանական կրթաթոշակներ

զ) ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կրթական չափորոշիչների ներդրման շրջանակներում որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում ներկայացնում է Քոլեջի տնօրենին, որն այն քննարկում է կոլեգիալ կառավարման խորհրդի նիստի ժամանակ:

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4.1 Մանկավարժական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են տարեկան իրականացվող նիստերի միջոցով:

4.2 Մանկավարժական խորհրդի նիստերը.

ա) մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական յուրաքանչյուր կիսամյակում առնվազն 2-3 անգամ: Տնօրենի կամ անդամների 1/3-ի պահանջով հրավիրվում են նաև արտահերթ :

բ) Մանկավարժական խորհրդի նիստը համարվում է իրավազոր անդամների 2/3-ի ներկայության դեպքում,

գ) Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրվում են:

4.3 Մանկավարժական խորհրդի որոշումները.

ա) Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են մանկավարժական խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,

բ) Մանկավարժական խորհրդի որոշումները կենսագործվում են տնօրենի հրամանով: